

Հայագիտական հրատարակութիւններ

ԱՆԱՀԻՏ ՅԻՑԻԿԵԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԵՂՆԱՅԻՆ ԱՐՈՒԵՍՏԸ, «Սո-
վետական Գրող» Հրատարակչութիւն, Երեւան, 1977, 250 էջ:

«Աղեղնային գործիքների հայկական մշակոյթին նուիրուած Անահիտ Յիցիկեանի ուսումնասիրութեանն ինձ վիճակուել է ծանոթանալ իբրև պաշտօնական ընդդիմախօս, երբ աշխատանքը ներկայացուած էր որպէս դիսերտացիա: Դեռևս այն ժամանակ կարծիք յայտնեցի, թէ այդ արժէքաւոր ուսումնասիրութեան նշանակութիւնն անցնում է սոսկ հայկական երաժշտագիտութեան սահմաններից եւ ցանկալի է դրա ամբողջական հրատարակումը», կը գրէ Արուեստագիտութեան Դոկտոր Փրոֆ. Լ. Գինդրուրգ, աշխատասիրութեան նուիրուած իր «Նախարան» խօսքին մէջ:

Առաջադրուած վերոյիշեալ ցանկութեան իրականացումով, հայ երաժշտութեան պատմութեան ընադաւառներէն մէկը, իր բաղմաթիւ լուծումներով կը դառնայ ընթերցող հասարակութեան սեփականութիւնը:

Յիցիկեանի աշխատասիրութեան առաջին դրուխն իսկ, «Հայաստանում աղեղնային գործիքների մշակոյթի հին աղբիւրները» (էջ 15-55), ընթերցողը կը դնէ հետաքրքրական նորութիւններու դիմաց: Գիտական ամուր հիմքերու վրայ հետազօտուած այս հատուածը կը յայտնաբերէ հնադիտական երկու մեծարժէք փաստարկումներ, որոնք լայնօրէն կը շրջադարձեն զուտ հայկական երաժշտագիտութիւնը: Անոնցմէ առաջինը կը ներկայացնէ աղեղնային՝ շութակի ընտանիքէն, գործիք մը, որ պատկերուած է Դուլինի պեղումներու ընթացքին յայտնաբերուած 11-րդ դարու անօթի մը վրայ, իսկ երկրորդը՝ 13-րդ դարու վերադրուող խաչքարի մը վրայ երեւցող աղեղնային գործիքն է: Նմանօրինակ աղբիւրներու վրայ հիմնուելով, հեղինակը կարողացած է հանդիլ այն եղրակացութեան թէ հայկական երաժշտական գործիքներու վրայ հին արեւելեան եւ բիւզանդական

աղղեցութիւններու զուգահեռ, զարգացած են նաև գործիքային ինքնուրոյն եւ ինքնատիպ գծեր՝ ընամլայրի ժողովրդական եւ արհեստավարժական աւանդութիւններու շնորհիւ: Այս աւանդութիւններէն մէկը լարերու ճարտարարուեստն է: Ուշադրաւ են Հին Հայաստանի մէջ լարերու արտադրութեան մասին Յիցիկեանի յայտնած մանրամասն տեղեկութիւնները: Հեղինակը չէ վլացած վերարտադրել շատ հետաքրքրաշարժ նկարներ, քաղուած Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի մի քանի ձեռագրերէն (էջ 38), նկարներ, որոնց ընդմէջէն (16, 17 եւ 18-րդ դարեր) կարելի է հետեւիլ քեմանչայի նման գործիքի մը զարգացման, ըլլայ ձեւի, ըլլայ գործիքին բոնուածքին տեսակէտէն, մինչև մեղի ծանօթ նուագարանը՝ Նաղաձ ԅովնաթանի ձեռքին մէջ:

Եւ վերջապէս կարելոր է դիտնալ որ թէ՛ մենակատարումներով, թէ՛ համոյթային բազմադան կազմութիւններով, գործիքային երաժշտութիւնը ի սպաս դրուած է Հայաստանի աղլարնակչութեան բոլոր խաւերուն ալ. բարձրաստիճան անձերու համար նուազող երաժիշտը միաժամանակ հասարակ ժողովուրդի հարսանիքներուն, խրախճանքներուն եւ տօնախմբութիւններուն հրաւիրուած ցանկալի հիւրն է եղած: Եթէ «աստուածային» (եկեղեցական) համարուած երաժշտութեան մէջ տիրապետողը եղած է երգեցողութիւնը եւ հոգեպարար քանթիլեանները, «մարդկային» (աշխարհիկ) կոչուած երաժշտութեան մէջ առաջին կարգի վրայ եկած են գործիքային նուագածութիւնը եւ պարը:

Ա. Յիցիկեանի հատորին Գ. դրուելը ինքնին կը զբաւէ աւելի քան 125 էջեր: Մեր դարուն սկիզբին կը ծագի «վիրթիոզ» ջութահահարներու փառաւոր փաղանգ մը՝ Գ. Վրոյր, Դ. Դաւթեան, Ա. Կիւտենեան եւ բազմաթիւ ուրիշներ, որոնք իրենց արուեստը կատարելագործած են Եւրոպայի կարելոր կեդրոններու մէջ, յատկապէս Պրիւքսել: Պելճիքայի մայրաքաղաքը կը հանդիսանար մեր դարու սկիզբին ջութակի ուսուցման ամենայայտնի եւրոպական կեդրոնը՝ առաջորդութեամբ Սեդար Թոմսոնի: Յիցիկեան հանգամանօրէն կը դժէ մեր առաջ հայ մեծ վիրթիոզ-կատարողներու կեանքն ու հասարակական գործունէութիւնները, ինչպէս նաև անոնց մանկավարժական բեղուն աշխատանքները: Աւելի քան ուշադրաւ է իմանալ թէ ինչպէս հայ տաղանդը միանդամայն կը բեղմնաւորէ արեւելեան դպրոցի յառած երաժշտական արուեստը, եւ կը բեղմնաւորուի արեւմտեան դպրոցի պատկանող դասականացած ստեղծագործութեանց ներգործութեամբ: Վրոյր, Դաւթեան, Յ. Նալպանդեան, Կիւտենեան, ջութակահար Ալեքսանեան, Պրիւքսելի եւ Բարիդի բարձրագոյն երաժշտանոցներէ ներս ստեղծած են մեծ խանդավառութիւն եւ պաշտօն ստանձնած են նոյն հաստատութիւններու մէջ: Անոնք ունեցած են մե-

նակատարային բեղուն գործունէութիւն, ապա վերադարձած են իրենց միջավայրը եւ նուիրուած ուսուցչական եւ դաստիարակչական բաղմակողմանի աշխատանքներու, հասցնելով բազմաթիւ արժէքաւոր աշակերտներ՝ իրենց կարգին հիանալի արուեստադէտ կատարողներ: Եւրոպա իրենց կեցութեան շրջանին անոնք հիացմունքին արժանացած են աշխարհահռչակ Սարաղադէներու, Սեւչիքներու, Եօսիւմներու, Աուերներու: Մասնակցած են միջազգային որակաւոր մրցոյթներու եւ զբաւած նախանձելի պատուանդաններ: Անոնցմէ ոմանք եղած են նաեւ երգչաններ եւ ելոյթներու ընթացքին նուազած իրենց հեղինակութիւններէն. գործակցած են եւ սերտօրէն բարեկամացած յայտնի արուեստադէտներու կամ հեղինակներու հետ, ինչպէս՝ Տիրան Ալեքսանեան – Բապլօ Գազար, Յովհաննէս Նալպանդեան – Ալեքսանդր Սպենտիարեան: Ակնբախ է ուրեմն որ մեր օրերու տաղանդաւոր հայ ջութակահարներն ու թաւջութակահարները պատահականութեան արդիւնք չեն, այլ հարուստ աւանդութեան մը մէկ նախատեսիլի շաւաւիղը:

Ա. Յիցիկեան հանգամանօրէն ներկայացուցած է աղեղնային նուազարաններու հայ վարպետներ՝ Դաւթեանն ու Վրոյրը, Սինանեան ընտանիքն ու Տիրան Ալեքսանեանը, Յովհաննէս Նալպանդեանն ու աշխարհահռչակ ջութակուսոյց-մանկավարժ Իւան Ղալամեանը, ու դեռ շատ մը այլ անուններ, հմտօրէն անդրադառնալով անոնց կատարողական ու մանկավարժական վաստակին:

Ա. Յիցիկեան անդրադարձած է նաեւ (էջ 122–130) Բ. Կանաչեանի կատարողական գործունէութեան: Արդարեւ, Կանաչեան, մեղի քաջածանօթ յօրինող երգչահանր դառնալէ առաջ, եղած է ջութակահար եւ իբր այդպիսին ասպարէզ իջած Պուլկարիոյ եւ Ռումանիոյ մէջ: Զութակահար Կանաչեան իր առաջին ելոյթները ունեցած է Վառնայի մէջ, դեռ երիտասարդ տարիքին, եւ արժանացած ջերմ դնահատանքներու: Աւելի ուշ ուսումնասիրած է նուազախումբի բոլոր գործիքները՝ ի մասնաւորի դաշնակը, որուն վրայ ընկերակցած է իր երգչուհի տիկնոջ: Այս առիթով Յիցիկեան կը խօսի նաեւ «Սոֆիայի օիբերայի թատրոնի հիմնադիրներէն», «պուլկարական մշակոյթի դարպացման գործում» մեծ դեր խաղացած «գոմբոզիդոր, երգեհոնահար, դաշնակահար Նաթան Բէկ Ամիրխանեան»ի (1872–1942 թթ.) մասին, որ հանդիսացած է Կանաչեանի առաջին մանկավարժ դաստիարակը, անոր երաժշտական ուսման ասպարէզին մէջ:

Ինականաբար Արեւմտեան Հայաստանի աղեղնային գործիքներու զարգացումը պիտի ընթանար առաւելաբար երկու ճիւղերով. մէկը՝ կապուած հայկական ժողովրդական աւանդութիւններու, եւ անոնց վարպետ կատարող սաղանդարներու, աշուղներու եւ գուսաններու հետ (17-րդ եւ 18-րդ դարեր), միւսը՝ զուգակցաբար եւրո-

պական երաժշտական մշակույթի իւրացման հետ (19-րդ և 20-րդ դարերու սկիզբը) : Յիցիկեան իրաւացի է երբ կ'ընդգծէ 19-րդ դարու հայ երաժիշտներու խաղացած վճռական դերը՝ Կոստանդնուպոլսոյ երաժշտական կեանքի եւրոպականացումին առնչութեամբ, յատկապէս կատարողական ուղիով, և այս՝ հակառակ քաղաքական չափազանց աննպաստ պայմաններուն : Բաղմաթիւ աչքառու դէմքերէն յիշենք միայն Գրիգոր Սինանեանը, որ 60-ական թուականներուն, եւրոպական առումով, — և ոչ աշուղական տիպի, — նուազախումբ կազմող առաջին խմբավարը հանդիսացած է : Մէկ քանի տարիներ ետք, 15 երաժիշտներէ բաղկացած իր խումբը ունեցած է մինչև 40 երաժիշտ կատարողներ :

Անոր երգացանկը նախ կազմուած է եւրոպական օփերաներու հատուածներէ, ինչպէս նաև հայկական, թրքական և յունական երգերու ու սլաւոնականներու նուազախմբային խմբադրումներէ, իսկ աւելի ուշ՝ եւրոպական դասական երաժշտութեան պատկանող երկերէ :

Անահիտ Յիցիկեան իր եղբակացութիւնները կը դարձացնէ պատմական անհերքելի փաստերու ճամբով : Անոր ոճը դիւրասահ է ու հաճելի . կը ջանայ նուազադոյնի վրայ պահել օտարամուտ բառերու զործածութիւնը՝ դործիքային թեքնիք տարրերու բացատրութեան մէջ կամ այլուր :

Եղբրափակելու համար, Յիցիկեան կ'ամբողջացնէ հայ արուեստագէտ ջութակահարներու փաղանդը՝ Հայաստանի, Մոսկուայի և Լենինկրատի երաժշտանոցներու մէջ շողարձակող նոր անուններով : Այդ բացառիկ տաղանդներու մէկտեղումով է որ կազմուած է ի մէջ այլոց, միջազգային հռչակի տիրացած «Կոմիտասեան Քառեակը», առաջնորդութեամբ Աւետ Գարրիէլեանի :

Մտենադրական հարուստ տուեալներով (հեղինակը հնադիտական տուեալներու աղբիւր օգտադործած է երեսունէ աւելի ձեռագիրներ, կարեւոր թիւով սկզբնաղբիւրներ, ինչպէս նաև հայերէն և օտար լեզուներով հրատարակուած բաղմաթիւ մենագրութիւններ և յօդուածներ) զբախօսուող այս աշխատասիրութիւնը, հեղինակի դիտական բարեխղճութեան ու համբերատար աշխատանքին վկայութիւնը ըլլալով մէկտեղ, հայ երաժշտութեան պատմագրութեան ուշադրաւ նուաճումներէն մէկը կարելի է նկատել :